Արձանագրություն N 2

ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-26/8 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան **«23» «09» 2025թ.**

ժամը 10.00

Հանձնաժողովի նախագահ՝
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
բյուջետային գործընթացի պատասխանատու՝ Ա. Համբարձումյան

Անդամներ՝
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման մասնագետ Ս. Թոփակյան

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
բյուջետային գործընթացի պատասխանատու՝ Գ. Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Լ. Ադոնց

---

1. Նիստի քննարկման հարցեր.

1.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու» մասին թիվ 526-Ն որոշման 14-րդ կետի 3-րդ ենթակետը հանձնաժողովի քննարկմանը ներկայացվեց «Վարչապետի աշխատակազմի (բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի) կարիքների համար՝ **համազգեստի** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՎԱԲՏ-ԷԱՃԱՊՁԲ-26/8** ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 22.09.2025թ.-ին Auction.am համակարգի միջոցով ներկայացված հրավերի հարցումը:

2. Նիստի ընթացքում որոշվեց

2.1 Հարցման վերաբերյալ տալ պարզաբանում հետևյալ բովանդակությամբ.

Հարցադրում N 1 Հարգելի հանձնաժողով, խնդրում ենք տրամադրել պարզաբանում 2-րդ և 3-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրի վերաբերյալ: Երկու չափաբաժինների բնութագրերում նշված է. 1. "Քթամասը և կրնկամասը կոշտ": Խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք կոշիկները պիտի ունենան մետաղական քթամաս: 2. "կոշիկ սպորտային՝ կանաչավուն (կամ սև) գույնի կաշվից և նեյլոնից": Խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք "3D mesh" գործվաքը, որը ունի սինթետիկ ծագում և պատրաստվում է պոլիէսթերից, նեյլոնից կամ սպանդեքսից, ընդունելի է Ձեր համար: Կանխավ շնորհակալ ենք:

Պարզաբանում N 1 Հարգելի գործընկեր,
2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսված կոշիկները պետք է ունենան կոշտ քթամասը և կրնկամաս, բայց ոչ պարտադիր մետաղական:

2. Սպորտային կոշիկը պետք է պատրաստված լինի կանաչավուն (կամ սև) գույնի կաշվից և նեյլոնից՝ ինչպես նշված է տեխնիկական բնութագրում:

Հարցադրում N 2 Հարգելի Հանձնաժողով, խնդրում ենք տրամադրել 2 և 3 չափաբաժիններով նախատեսված կոշիկների պահանջվող չափսերի մոտավոր միջակայքը կամ առկայության դեպքում չափս-քանակ աղյուսակը: Կանխավ շնորհակալ ենք:

Պարզաբանում N 2 Հարգելի գործընկեր,
2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսված կոշիկների պահանջվող չափսերի մոտավոր միջակայք կամ չափս-քանակ աղյուսակ չենք կարող տրամադրել, քանի որ կոշիկների փաստացի մատակարարումը նախատեսված է 2026 թվականին և համապատասխան հաստիքների մի մասը դեռևս թափուր է, իսկ մյուս մասը հնարավոր է փոփոխվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

Հանձնաժողովի անդամների և քարտուղարի ստորագրությունը

Նախագահ՝ Ա. Համբարձումյան

Անդամներ՝ Ս. Թոփակյան

Գ. Մարտիրոսյան

Քարտուղար՝ Լ. Ադոնց